

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՆՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՐՅՈՒՄԵԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ (1920 թ.)

### ԷՊԻՏԱ ԳԶՈՅԱՆ

1918 թվականի մայիսի 28-ի անկախացումից հետո նորաստեղծ Հայաստանի հանրապետության առջև ծառայել էին մի շարք դժվարություններ. երկիրը չուներ ո՛չ իրական արժեք ներկայացնող դրամ, ո՛չ արդյունաբերություն, ո՛չ ճանապարհներ: Մի խոսքով, երկիրը գտնվում էր ֆինանսական խորը ճգնաժամի մեջ, և կառավարությունը փորձում էր ելքեր գտնել ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Այդ նպատակով Փարիզում գտնվող հայկական ազգային պատվիրակությունը կառավարությունից հրաման էր ստացել խոշոր փոխառություն ստանալ Եվրոպայում (մոտ կես միլիոն անգլիական ոսկի, կամ 20-25 միլիոն ֆրանկ): Սակայն փոխառություն ստանալու համար նախ անհրաժեշտ էր շահագրգռել Եվրոպական երկրներին, իսկ հետո՝ ճշգրիտ վիճակագրական տվյալներ ներկայացնել՝ համոզելու համար, որ Հայաստանի Հանրապետությունն ի վիճակի էր պարտքը վճարելու:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Եվրոպական ֆինանսական խավերը մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում հունքի և մասնավորապես նավթի նկատմամբ և շտապում էին ձեռք բերել նորաստեղծ երկրների հանքավայրերը (Լեհաստան, Չեխոսլովակիա և այլն): Նրանք շահագրգռություն էին ցուցաբերում նաև Հայաստանի հանդեպ, քանի որ գտնում էին, որ լեռնային այդ երկրում կարող են հանքատեսակներ և նավթի պաշարներ հայտնաբերվել: Այդ հարցով նրանք նույնիսկ դիմել էին հայկական պատվիրակությանը<sup>1</sup>: Խնդիրը բարդանում էր այն պատճառով, որ հայկական կողմը տեղյակ չէր, թե Հայաստանը ինչ սահմաններ պետք է ունենար, և որ շրջանում ինչ հանքեր կային:

Դեռ 1920 թ. փետրվարին Ազգերի լիգայի խորհուրդը ընդունել էր մի բանաձև, համաձայն որի՝ Լիգան պետք է միջազգային կոնֆերանս գումարեր՝ ուսումնասիրելու համաշխարհային պատերազմի հետևանքով սկսված ֆինանսական ճգնաժամը, գտնելու այն հաղթահարելու ուղիներ<sup>2</sup>: Քանի որ Եվրոպական ֆինանսական խավերը ոչ մի գաղափար չունեին Հայաստանի արդյունաբերական ներուժի, հանքերի, երկաթուղիների, երկրի բնական պաշարների մասին, Փարիզում Հայաստանի Հանրապե-

<sup>1</sup> Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Հանդիպումներ Ա. Սհարոնեանի և Գ. Կիլ-պենկեանի հետ, Բոստոն, 1948 թ., էջ 10-11:

<sup>2</sup> Տե՛ս League of Nations Archives (Geneva, Switzerland), այսուհետև՝ LNA, Section II, Classement 11, dossier 3421, doc. 7734:

տության պատվիրակության ֆինանսական և տնտեսական խորհրդական Ռուբեն Բերբերյանն առաջարկում է դիմել Ազգերի լիգային՝ մասնակցելու վերջինիս կողմից կազմակերպվող միջազգային ֆինանսական կոնֆերանսին, ինչը հնարավորություն կտար միջազգային հանրությանը ներկայացնելու Հայաստանի տնտեսական և ֆինանսական վիճակը և ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու ելքեր գտնել<sup>3</sup>: Համաժողովը, որին ներկա էին լինելու մոտ 39 երկրի ամենահեղինակավոր ֆինանսիստներ, պետական դրամատների ներկայացուցիչներ, տնտեսագետներ և ֆինանսների նախարարներ, եզակի առիթ էր հայկական հողերի բնական հարստությունն ու տնտեսական հնարավորությունները ներկայացնելու և Եվրոպայից օգնություն խնդրելու համար: Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը դիմում է Ազգերի լիգային՝ Բրյուսելի խորհրդաժողովին Հայաստանի Հանրապետության մասնակցության խնդրանքով: Խորհրդաժողովի կազմակերպիչներին ուղղված իր պատասխան նամակում Ազգերի լիգայի գլխավոր քարտուղար Էրիկ Դրոմոնդը գրում է. «Ես որևէ խնդիր չեմ տեսնում Հայաստանի լիակատար անդամակցության առումով: Սակայն պետք է գիտակցենք, որ այս դեպքում Բալթյան պետությունները ևս պետք է անդամագրվեն, եթե նման դիմում ներկայացնեն»<sup>4</sup>: Նշենք, որ Բալթյան պետությունները նույնպես ընդունվում են, սակայն առանց քվեարկելու իրավունքի, մինչդեռ Հայաստանը կոնֆերանսին մասնակցում է որպես լիիրավ անդամ: Այսպիսով, հայկական պատվիրակության անդամներ Ռուբեն Բերբերյանը և Մենթոր Բունիաթյանը մեկնում են Բրյուսել՝ մասնակցելու կոնֆերանսի աշխատանքներին<sup>5</sup>: Պետք է ընդունել, որ բավական բարդ գործ էր դրված Հայաստանի Հանրապետության պատվիրակության առջև. նախ դեռ ճշտված չէին նորակազմ հանրապետության աշխարհագրական սահմանները, և բացի այդ, Հայաստանի տնտեսական-արդյունաբերական հարցերի վերաբերյալ պատվիրակությունը վիճակագրական շատ քիչ տվյալներ ուներ: Մինչդեռ անհրաժեշտ էր կոնֆերանսին ներկայացնել համոզիչ տվյալներ և փաստեր, խոսել նորակազմ Հայաստանի, վերջինիս կրած զոհողությունների, ինչպես նաև հնարավորությունների և իրական ներուժի մասին: Իր հուշերում Բերբերյանը գրում է. «Պետք էր ներկայացնել Հայաստանը եթե ոչ որպես նոր Կալիֆորնիա՝ լի հարուստ հանքերով, ապա զոհե այնպես, որ ունկնդիրը համոզվի, որ մեր երկիրը ունի բոլոր հնարավորությունները տնտեսապես զարգանալու, փոխ վերցրած դրամազուլիսը վերադարձնելու համար: Պետք էր նաև համոզել, որ Հայաստան կոչված հողամասի սահմաններում չկա և չի կարող լինել վտանգ, եթե Եվրոպան ներմուծի իր դրամազուլիսը: Տնտեսական, ֆինանսական կամ գիտական զեկույցները սկզբունքորեն պետք է զերծ մնան զգայականություններից: Սակայն մեր հայկական դեպքում ես չէի կարող բավականանալ զուտ չոր ու ցամաք նյութական հնարավորությունների մասին խոսելով. պետք էր ցույց տալ

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 12:

<sup>4</sup> LNA, Class. 11, Dossier 3421, doc. 8580.

<sup>5</sup> Տե՛ս LNA, International Financial Conference, Report of the Conference, Brussels, էջ 33:

Բրյուսելյան խորհրդաժողովին, որ Հայաստանը, ավելի քան որևէ այլ պետություն, իրավունք ունի խնդրելու, որ Եվրոպայի ընդառաջ գնա և ձեռք մեկնի տնտեսական դժվարին պայմաններում»<sup>6</sup>:

1920 թ. սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 8-ը Բրյուսելում գումարվում է միջազգային ֆինանսական կոնֆերանս, որին մասնակցում էին 86 երկայացուցիչ 39 երկրներից: Նշենք նաև, որ բոլորը հանդես էին գալիս որպես փորձագետ, այլ ոչ որպես իրենց երկրի պաշտոնական քաղաքականությունը ներկայացնողներ: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին նաև Առևտրի միջազգային ինստիտուտը, Փոխհատուցման կոմիտեն, Միջազգային նպաստամատույց կոմիտեն, Գլխավոր տնտեսական խորհուրդը, Միջազգային աշխատանքային գրասենյակը, Առևտրի միջազգային պալատը:

Ինչպես արդեն նշեցինք, կոնֆերանսի հիմնական նպատակն էր ուսումնասիրել աշխարհի ֆինանսական դրությունը Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Այնպես էր, որ պատերազմի պատճառած վնասները տարբեր էին՝ կախված պատերազմի մեջ տվյալ պետության ներքաշվածության աստիճանից: Այդ պատճառով որոշվել էր, որ կոնֆերանսի սկզբում պետք է ներկայացվեին բոլոր 39 երկրների տնտեսական վիճակը նկարագրող զեկույցներ, որից հետո միայն կոնֆերանսը ձեռնամուխ կլիներ հետագա քայլերի մշակմանը<sup>7</sup>:

Կոնֆերանսը մասնակից երկրները բաժանել էր երկու խմբի՝ երկրներ, որոնք պատերազմի պատճառով արմատական փոփոխություններ էին կրել, ու նորաստեղծ և չեզոք երկրներ: Առաջին խմբում (Ավստրալիա, Չեխոսլովակիա, Եստոնիա, Ֆինլանդիա, Հունգարիա, Լատվիա, Լիտվիա, Լեհաստան, Ռումինիա, Սերբիա, Խորվաթիա, Սլովենիա) ներառված էր նաև Հայաստանը: Այս երկրների բյուջեների վերաբերյալ կոնֆերանսը տալիս է հետևյալ ձևակերպումը. «Վերջիններս գտնվում են ձևավորման, ստեղծման կամ վերակազմավորման փուլում, ունեն չնչին եկամուտներ, իսկ ծախսերը, եթե ուղղված չեն ազգային անվտանգության պաշտպանությանը, նախնական բնույթ են կրում: Նրանց բոլորի բյուջեները դեֆիցիտով են, չի աշխատում պետական եկամուտների մեքենան, իսկ շարունակվող պատերազմները, ռազմամթերքի վրա ծախսվող գումարները հնարավորություն չեն տալիս հավասարակշռելու պետական բյուջեն: Եկամուտները չեն բավարարում անգամ վարչական ծախսերը հոգալու համար: Փողը բոլոր այս երկրներում արժեք չունի, իսկ արտահանումը բացակայում է»: Սակայն կոնֆերանսի մասնակիցները հույս ունեին գյուղատնտեսությանը զարկ տալու միջոցով հասնել դրական արդյունքի, քանի որ վերոհիշյալ երկրներից մի քանիսը (այդ թվում նաև Հայաստանը) ունեին գյուղատնտեսական ուղղվածություն<sup>8</sup>:

Քանի որ երկաթուղիների վիճակը անմիջականորեն կապված էր տնտեսական և ֆինանսական կացության հետ, ուստի կոնֆերանսը բավա-

<sup>6</sup> «Հայրենիք» ամսագիր, նշվ. հոդվածը, էջ 14:

<sup>7</sup> St'u Proceedings of the Conference. Statements on the financial situation of the countries represented at the conference:

<sup>8</sup> St'u նույն տեղը:

կանին հանգամանորեն անդրադառնում է նաև այս խնդրին, որի վերաբերյալ գնահատականը հետևյալն էր. «Անդրկովկասում երկաթուղիները գտնվում են ծայրահեղ վատ վիճակում, չկա որևէ կազմակերպվածություն: Բացակայում է փոխադարձ վստահությունը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև: Համաձայնագիրը, որը պետք է կնքվեր նրանց միջև, ձախողվեց բրիտանացիների գնալուց հետո: Երկաթուղիների գործը գլուխ բերելու համար հսկայական գումարներ են անհրաժեշտ: Ամենաքիչը 100 հազար ֆունտ ստերլինգ է պետք երկաթգծերը, լոկոմոտիվները և շարժակազմը ոտքի կանգնեցնելու համար»<sup>9</sup>: 100 հազարը մեծ գումար էր, բացի այդ՝ իրավիճակը տարածաշրջանում անկայուն էր և վստահություն չներշնչող: Ուստի քիչ հավանական էր հուսալ, որ որևէ կազմակերպություն կներդներ այդ գումարը բարձր ռիսկայնության գործի մեջ: Հուսադրող չէր նաև Հայաստանի տնտեսական և ֆինանսական վիճակի մասին Հայաստանի Հանրապետության ներկայացրած զեկույցը: Երկրում տիրող կացության մասին զեկույցը նշում էր հետևյալները.

1. Ծնունդ առնելով պատերազմի կիզակետում՝ թուրքերի անմիջական սպառնալիքների պայմաններում Հայաստանի Հանրապետությունն ի վիճակի չէր ստեղծելու դրամական կայուն համակարգ, որը հիմնված կլիներ որևէ կայուն արժեքի վրա: Կառավարությունը ստիպված էր թողարկել թղթադրամ, որը ոչնչով երաշխավորված չէր:

2. Գտնվելով շարունակական պատերազմի մեջ, ստիպված լինելով ապահովել ավելի քան 600 հազար փախստականների և 40 հազար որբերի, ինչպես նաև չունենալով հստակ սահմաններ՝ Հայաստանի Հանրապետությունը ի վիճակի չէր հիմնելու հարկային այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտար փոխհատուցել իր հսկայական ծախսերը և դեֆիցիտը:

3. Թուրքերի կողմից լիովին ավերված և թալանված Հայաստանի Հանրապետությունը ստիպված էր երկրի վերականգնման և բնակչության գոյությունը ապահովելու նպատակով ամեն ինչ գնել արտասահմանից՝ հնարավորություն չունենալով որևէ բան արտահանել՝ հաշվեկշիռը պահպանելու համար:

4. Ելք չունենալով դեպի ծով՝ Հայաստանի Հանրապետությունը արտարժույթով գործարքները ստիպված էր կատարելու երկրից դուրս՝ Թիֆլիսում կամ Բաթումում: Հայաստանի Հանրապետությունը որոշ առումով նաև հարկատու էր օտար երկրների՝ ապրանքներ ներմուծելու և որոշ այլ ծախսերի առումով<sup>10</sup>:

Սրանք էին այն գլխավոր պատճառները, որոնք, ըստ հայկական կողմի, խանգարում էին Հայաստանի Հանրապետությանը դուրս գալու ստեղծված ծանր վիճակից: Սակայն ինչպես արդեն նշել ենք, զեկույցը չէր անդրադարձել միայն բացասական երևույթներին: Կային նաև բավական խոստուննալից և շահագրգռող տվյալներ: Հատկապես ուժեղ էր շեշտը դրված գյուղատնտեսության զարգացման հնարավորության վրա: Գյուղատնտեսական մեքենաները և գործիքները կարող էին ոլորտի զարգացման համար մեծ խթան հանդիսանալ: Անհրաժեշտ էր նաև զարգացնել տե-

<sup>9</sup> LNA, Rapport IX, The European Transport Situation.

<sup>10</sup> Տե՛ս LNA, Section 10, dossier 5869, doc. 5869:

ղական արտադրությունը՝ կիրառելով հաստոցներ և գործիքներ: Օտարերկրյա ներդրումները խրախուսելու նպատակով հայկական կողմը առաջարկում էր շահագործել Հայաստանի Հանրապետության բնական հարստությունները, որոնք երկրում շատ էին: Ձեկույցը արժևորել էր նաև երկրի ջրային ռեսուրսների ներուժը, ինչը, մասնագետների կարծիքով, հնարավորություն կստեղծեր ապահովելու Հայաստանի Հանրապետության բոլոր ֆաբրիկաները և երկաթուղիները էներգիայով: Այս ուղղությամբ կառավարությունը արդեն մշակել էր բազմաթիվ ծրագրեր, որոնցից մի քանիսն արդեն իրականացման փուլում էին, սակայն քիչ հավանական էր առանց ներդրումների իրականացնել այս բոլոր նախագծերը: Հայկական կողմը կոնֆերանսից խնդրում էր աջակցություն:

1. Կանոնավորել Հայաստանի փոխադրամիջոցները երկաթուղային կամ այլ միջոցներով:

2. Նպաստել երկրի հողագործական ու հանքային կարողությունները և հատկապես ջրային ռեսուրսները շահագործելուն՝ այս նպատակով կոչ ուղղելով դրամատիրական ընկերություններին;

3. Կանոնավորել երկրի ֆինանսները՝ թղթադրամը փոխարինելով ոսկով ապահովված այլ արժեթղթերով: Այս նպատակով հիմնել ազգային դրամատուն, վերցնել փոխառություն, ինչը հնարավորություն կտար ստեղծել մեծ ձեռնարկատիրություններ, կատարել վերաշինական աշխատանքներ և շահագործել բնական պաշարները<sup>11</sup>:

Հատկանշական է, որ եվրոպական ֆինանսական խավերը կոնֆերանսի ընթացքում և դրանից հետո սկսում են հետաքրքրություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետության հանդեպ: Օրինակ՝ Լոնդոնից Փարիզ է ժամանում «Ֆինանսական խմբի» մի ներկայացուցիչ, որը բանակցություններ է վարում հայկական պատվիրակության հետ, թե անգլիացիները ինչ պայմաններով կարող են շահագործել Հայաստանի հանքերը և երկաթուղիները: Lazard Brothers ֆինանսական ընկերությունից էլ նամակ է ստացվում Հայաստանի պղնձի հանքերի վերաբերյալ:

Բրյուսելյան կոնֆերանսն իր աշխատանքները բաժանել էր չորս մասի և հարցերը ավելի խորությամբ քննելու համար ստեղծել էր հետևյալ հատուկ կոմիտեները՝ հասարակական ֆինանսներ, տարադրամ և փոխանակում, միջազգային առևտուր, վարկեր:

Ֆինանսների հանձնաժողովը իր հիմնական նպատակն էր համարում հասնել ազնիվ քաղաքականության վրա հիմնված համագործակցության: Ըստ նիստերի ընթացքում ներկայացված տվյալների՝ երկրների պետական գումարների 20%-ը նախկինի պես ծախսվելու էր ռազմամթերք ձեռք բերելու և պատերազմների նախապատրաստվելու վրա: Մինչդեռ պետությունների միջև համագործակցությունը հնարավորություն կտար առկա ռեսուրսները օգտագործելու միայն արտադրական նպատակներով: Այս առումով կոնֆերանսը Լիզայի խորհրդին առաջարկում էր Վեհաժողովի առաջիկա նիստին ներկայացնել սպառազինությունների կրճատման ծրագիր<sup>12</sup>:

<sup>11</sup> Տե՛ս **Վ. Փափազյան**, Իմ հուշերը, հ. 3, Գահիրե, 1957, էջ 159-160:

<sup>12</sup> Տե՛ս International Financial Conference. Report of the Conference, Brussels, էջ 8-9:

Կոնֆերանսի ընթացքում որոշում է ընդունվում բոլոր մասնակից պետություններում ստեղծել կենտրոնական բանկ (եթե չունեն), իսկ եթե երկիրը դրա համար բավական միջոցներ չունի, ապա այդ արվելու էր դրսի կապիտալի օգնությամբ. և այս դեպքում իրականացվելու էր միջազգային հսկողություն<sup>13</sup>:

Ինչ վերաբերում էր վարկերին, ապա կոնֆերանսը որոշում է ընդունում ստեղծել միջազգային նոր կազմակերպություն, որը պետք է ծառայեր վարկ վերցնելու նպատակ ունեցող երկրներին: 39 երկրների ֆինանսական վիճակի վերաբերյալ զեկույցների ուսումնասիրությունից պարզվել էր, որ այդ երկրների զգալի մասը ուներ բյուջեի դեֆիցիտ, այդ թվում՝ նաև Հայաստանը: Կոնֆերանսը որոշում է նաև, որ մասնակից բոլոր երկրների կառավարությունները պարտադիր պետք է իրականացնեն սոցիալական և ֆինանսական բարեփոխումներ, կատարեն որոշ ապրանքների և ծառայությունների գների իջեցում (այդ թվում՝ հացի, վառելիքի և այլն): Պետությունները պարտավորվում էին նաև կրճատել ռազմական ծախսերը<sup>14</sup>:

Կոնֆերանսը միաձայն ընդունում է նաև Միջազգային առևտրի հանձնաժողովի առաջարկները, որոնցում հատկապես կարևորվում էր իրական խաղաղության և ազգերի միջև բարեկամական հարաբերությունների հաստատումը: «Պետությունները, որոնք առաջացել են կամ ընդարձակվել պատերազմի հետևանքով, պետք է անմիջապես վերահաստատեն լիակատար բարեկամական համագործակցություն և բարիքների անխափան փոխանակում, որպեսզի Եվրոպայի տնտեսական կյանքի կարևոր միասնությունը չընդհատվի»<sup>15</sup>: Կոնֆերանսի պնդմամբ՝ յուրաքանչյուր պետություն պետք է հասներ առևտրի այնպիսի ազատության, ինչպիսին գոյություն էր ունեցել պատերազմից առաջ, վերացներ արհեստական սահմանափակումները, գնային խտրականությունը: Կոնֆերանսը հույս ուներ, որ Ազգերի լիգան կանի ամեն ինչ, որպեսզի առևտրային փոխառություններ տրամադրի այն երկրներին, որոնք ի վիճակի չեն սեփական ուժերով վերակազմավորվելու: Միջազգային առևտրի խթանման հարցում կոնֆերանսը կարևորում էր նաև երկրների և հատկապես պատերազմից տուժածների տրանսպորտային համակարգերի վերանորոգումը, բարելավումը և տնտեսական նպատակներին ծառայեցնելը<sup>16</sup>:

Միաձայն են ընդունվում նաև Միջազգային փոխառությունների հանձնաժողովի բանաձևերը, որոնցում հիմնական շեշտը դրված էր փոխառություն ստանալու ճանապարհին ամենազլխավոր խոչընդոտի՝ փոառություն վերցնող պետությունում համապատասխան երաշխիքների բացակայության հանգամանքի վրա: Այս ուղղությամբ կոնֆերանսի առաջարկները հետևյալն էին.

1. ստեղծել միջազգային կազմակերպություն, որին կարող էին դիմել վարկ վերցնել ցանկացող պետությունները՝ իրենց համար կենսական նշանակություն ունեցող ներմուծվող ապրանքների դիմաց վճարելու հա-

---

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>14</sup> Տե՛ս LNA, Section II, Classement 11, dossier 3421, doc. 7734:

<sup>15</sup> International Financial Conference. Report of the Conference, Brussels, p. 10.

<sup>16</sup> Տե՛ս LNA, Rapport IX, The European Transport Situation:

մար: Ազգերի լիգան պետք է ստեղծեր ֆինանսիստների և բիզնեսմենների հանձնաժողով, որը պիտի պայմաններ մշակեր՝ հեշտացնելու համար փոխառությունների անմիջական տրամադրումը (փոխանցումը) հասարակական կազմակերպություններին,

2. ստեղծել պարտատոմսեր և վերջիններիս համար ապահովել միջազգային երաշխիքներ,

3. ստեղծել իրավական դաշտ՝ փոխառությունների տրամադրումը իրականացնելու համար<sup>17</sup>:

Միջազգային փոխառության հանձնաժողովը կոնֆերանսին առաջարկում էր ստեղծել նաև ապահովագրական ընկերություն, օրինակ՝ Լոնդոնում, որը կզբաղվեր միջազգային փոխառությունների ռիսկայնությամբ: Ընկերությունը պետք է ունենար հայթայթված անհրաժեշտ կապիտալ մասնավոր և միջազգային աղբյուրներից: Ենթադրվում էր, որ գլխավոր գրասենյակը պետք է գործեր նախագծով շահագրգռված երկրների համապատասխան ընկերությունների հետ համագործակցելով: Սրա առավելությունն այն էր, որ հնարավորություն էր ստեղծվում նվազեցնելու ռիսկայնությունը և իրականացնելու ավելի արդյունավետ վերահսկողություն<sup>18</sup>:

Այսպիսով, ամփոփելով իր աշխատանքները՝ Բոյուսելի միջազգային կոնֆերանսը հանգեց հետևյալին: Նախ որոշվեց ստեղծել միջազգային տնտեսական և ֆինանսական մի կազմակերպություն, որը բաղկացած կլիներ քաղաքական, տնտեսական, ֆինանսական, բանկային, առևտրի, գյուղատնտեսության և արտադրության բնագավառներում հայտնի տարբեր ազգության 12 անձանցից: Նրանց ընտրելու էր Լիգայի խորհրդը: Յուրաքանչյուր երկիր պարտավորվելու էր կանոնավոր զեկույցներ և վիճակագրական տվյալներ ներկայացնել ֆինանսական և տնտեսական խնդիրների վերաբերյալ: Կոնֆերանսը ցանկալի էր համարում, որ յուրաքանչյուր երկիր այդ նպատակով իր տարածքում ստեղծի հատուկ գրասենյակ, որը ուղղակի կապի մեջ կգտնվեր մյուսների հետ: Կազմակերպությունը յուրաքանչյուր վեց ամիսը մեկ երկրների ներկայացրած զեկույցների հիման վրա պետք է մշակեր ընդհանուր իրավիճակին վերաբերող ամփոփիչ զեկույց: Ամեն տարի (հնարավոր է նաև ավելի հաճախ) կազմակերպությունը պետք է հրավիրի կոնֆերանս, որը Վճիռներ կկայացնի քննարկվելիք հարցերի կապակցությամբ: Յուրաքանչյուր երկիր կոնֆերանսին պետք է ներկայացված լինի մեկական պատգամավորով:

Որոշում է ընդունվում նաև, որ մասնակից պետությունները պետք է Լիգայի խորհուրդ ներկայացնեն ոչ միայն իրենց ընդհանուր բյուջեն, այլ նաև պետության ծախսերը և եկամուտները կես տարվա կտրվածքով, ինչպես նաև՝ ամբողջական տվյալներ հարկային համակարգի վերաբերյալ: Այս տեղեկությունների հիման վրա Ազգերի լիգան պետք է թուցիկներ պատրաստեր աշխարհի տարբեր երկրների ֆինանսական դրության վերաբերյալ:

Կոնֆերանսը Ազգերի լիգային խորհուրդ էր տալիս նաև լրջորեն զբաղվելու պետությունների սպառազինությունների կրճատման հարցով<sup>19</sup>:

<sup>17</sup> Տե՛ս International Financial Conference. Report of the Conference, Brussels, էջ 14:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>19</sup> Տե՛ս International Financial Conference. Report of the Conference, Brussels, էջ 16-27:

Սրանով Բրյուսելի ֆինանսական կոնֆերանսը ավարտեց իր աշխատանքները: Մասնակից պետությունները ընդհանուր առմամբ գոհ էին կոնֆերանսի արդյունքներից: Այն խիստ կարևոր էր նաև Հայաստանի Հանրապետության համար: Մի կողմից կոնֆերանսը հնարավորություն ընձեռեց ներկայացնելու երկրի իրական տնտեսական ներուժը և հնարավորությունները, մյուս կողմից նպաստեց Հայաստանի ինտեգրմանը միջազգային հանրությանը: Թեև դեպքերի կտրուկ շրջադարձը թույլ չտվեց Հայաստանին քաղելու կոնֆերանսի դրական պտուղները, սակայն մի բան ակնհայտ էր. Ազգերի լիգայի անդամ պետությունները Հայաստանը դիտում էին որպես հավասար սուբյեկտ: Բրյուսելյան կոնֆերանսին Հայաստանի Հանրապետության մասնակցության հանգամանքը նաև ապացուցեց, որ Ազգերի լիգան իրոք մտադիր էր անդամագրելու նորանկախ Հայաստանի Հանրապետությանը:

**ЭДИТА ГЗОЯН – *Участие делегации Республики Армения в работе Международной финансовой конференции в Брюсселе (1920 г.)*** – Международная финансовая конференция, организованная Лигой Наций, проходила в Брюсселе с 24 сентября по 8 октября 1920 года. По просьбе Армении ее делегацию пригласили участвовать в работе этого важного международного форума, что подчеркивало особое отношение членов Лиги к молодому государству. Чтобы преодолеть разруху и восстановить экономику, республика остро нуждалась в финансовой поддержке. Конференция давала редчайшую возможность отчасти решить эту задачу, а кроме того, интегрироваться в международное сообщество. Хотя реальной помощи Армения так и не получила, сам факт ее участия в работе авторитетного форума в качестве равноправного партнера имел большое психологическое значение.

**EDITA GZOYAN – *Participation of the Armenian Delegation in the works of International Financial Conference in Brussels (1920)***. – The present paper dwells on the activity of the Armenian Delegation during the International Financial Conference, organized by the League of Nations in Brussels, during September-October 1920. The fact that the Republic of Armenia was invited to participate in the Conference indicated the disposition of the League members to Armenia.

The newly independent republic needed some financial assistance to have its economic and financial situation restored. In this respect, the Conference was a unique opportunity to achieve this task and to be integrated into the international society.

Although the Republic of Armenia did not benefit from the Conference, its participation as an equal member had a great importance for the Republic.